

23914

23915

23916

23917

891.99

p - 88


44

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ



1001
1908

Арутюнь Туманянцъ „ХОЛОСТОЙ“.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Վրաց Հրատ. Ընկ. || Типог. Груз. Изд. Т—ва.
1898

Дозволено цензурою. Тифлисъ, 29-го Сентября, 1897 г.

95446-123

ԱՄՈՒՐԻՆ

I

յ, սամովար!

— Իսկոյն, պարոն!



Միքանի ըոպէից յետոյ հիւ-
րանոցի սպասաւորը ներս մտաւ
Մակարեանի սենեակը և եռա-
ցող ինքնաեռը դրեց սեղանին:
Սպասաւորը իսկոյն դուրս գնաց
պաքսիմատ բերելու, իսկ Մա-
կարեանը ծխելով՝ սկսեց իր հա-
մար թէյ պատրաստել: Նա քա-
ռասունեհինգ տարեկան տղա-
մարդ էր, ուրախ և անհոգ
դէմքով: Եւ ինչու չը պիտի
ուրախ լինի? Ինքը հարուստ,
միայնակ և ամուրի: Ամուս-
նացած չէ, որ ընտանեկան ծանր
հոգսերը ճնշեն նորա հոգին.
չունի աղքատ ծնողներ, որ հոգայ նորանց

պէտքերը: Նորա խստապահանջ, ժլատ, աշխարհային զւարճութիւնների թշնամի, իր որդուն միշտ սաստող ու նախատող հայրը վաղուց արդէն մեռել է և իր ահագին կարողութիւնը թողել իր որդուն: Վաղուց արդէն լռել է հօր սպառնալից ձայնը. վաղուց հանգել են նորա սարսափելի խոշոր աչքերը, որոնք թաւ ու կիտած յոնքերի տակից մի ժամանակ կրակ ու շանթ էին թափում որդու վրայ: Ժլատ ու դաժան հօր մահը բացել էր որդու առաջ ազատ ճանապարհ, և արիւնով դիզած փողերը սկսեցին թափւել շռայլութեան և զւարճութեան անյատակ ծովը:

Մակարեանը բոլորովին չէր հետաքրքրւում հասարակական շահերով ու պէտքերով: Նա բացի իր «ես»ից, ուրիշ բան չէր ճանաչում: Իսկ երբ նորա շրջաններում մի որեւիցէ հարց էր ծագում, նա այն ժամանակ ըսկսում էր անփոյթ կերպով անցուդարձ անել, շվշւացնել զանազան երգեր ու լուսամտից դէպի դուրս նայել: Մակարեանը միայն այն ժամանակ էր իր կարծիքը յայտնում, երբ հարցնում էին: Օրհնուի այդպիսի սովորութիւն! Մակարեանը հօր մահուանից յետոյ գնաց Պետերբուրգ, ուր զբօսանքի բաժակը քամելով մինչև տակ, վերադարձաւ Թիֆլիզ և սկսեց տարածել ա-

մեն տեղ, իբր թէ աւարտել է համալսարանը և փաստաբանութեան դիպլոմ է ստացել: Այն ինչ նա Պետերբուրգում եղած ժամանակը միայն հեռւից համալսարանի դռներն էր հոտքաշել: Այն ժամանակ Մակարեանը բսսնկահինգ տարեկան էր, երբ վերադարձաւ Թիֆլիզ դիպլոմը ծոցին (?):

Թէպէտ ես բամբասանք չեմ սիրում, բայց, ընթերցող, ականջիդ կ'ասեմ, որ մեր Մակարեանը սիրում էր կօնծաբանութիւն և թըղթախաղ: Ե՛հ, ամօթ չէ, կրթւած մարդը այդպէս էլ պէտքէ լինի! Իսկ գեղեցիկ սեռը? Օ, դորա անունը միք տալ, թէ չէ Մակարեանի միսը փշաքաղւում է! Կար ժամանակ, երբ նա Պետերբուրգի կարճ իւրկա հագած գեղեցիկուհիներին կը հաւաքէր իր շուրջը, որոնցից մէկին աջ կողքին կը նստացնէր, միւսին ձախ կողքին, երրորդին ծնկան վրայ... նոցա բոլորին ջան կ'ասէր, ջան կը լսէր, համբոյր, ծիծաղ, կօնծաբանութիւն, սիրախօսութիւն, սիրաբանութիւն և ամեն տեսակ «թիւն»ներ!.. Իսկ այժմ? Այժմ էլ պակաս չէ Մակարեանը: Թէպէտ այժմ էլ ուրախ է անցկացնում իր օրերը 45 տարեկան Մակարեանը, բայց և այնպէս երիտասարդական օրերին օր չի հասնիլ: Սակայն ներողութիւն, նա այժմ էլ երի-

տասարդ է. եթէ չէք հաւատում, իրան հարցրէք! Դուք ամենևին ուշադրութիւն միք դարձնել նորա խորշոմած երեսին, ճակատի փոքրիկ կնճիռներին, արօհօլից կարմրած խոշոր քթին, մէջքի կորութեան, նորա մերկ կառարին, նորա սևացած ու կարկատած ատամներին... այդ բոլորը ոչինչ! Արևս վկայ, եթէ մէկը փորձի Մակարեանին յիշեցնելու, որ նա արդէն մօտեցել է ծերութեան շեմքին, այդպիսին էլ չի պրծնիլ նորա կատաղութիւնից:

Մակարեանը պառաւած օրիորդի նման միշտ փոքրացնում էր իր տարիքը: Քառասուն և հինգը միշտ երեսուն էր դարձնում:

Սպասաւորը բերեց պաքսիմատը և իսկոյն դուրս գնաց:

Մակարեանը խալածը հագին անցուղարձ էր անում իր առանձնութեան մէջ, երբեմն մօտենում սեղանին, կծում պաքսիմատը, մի կում թէյ խմում և դարձեալ անցուղարձ անում: Ամբողջ հիւրանոցի մէջ Մակարեանի սենեակը ամենից ընդարձակն ու շքեղն էր: Այդտեղ կը գտնէիք ամեն տեսակ ճոխութիւններ—թաւշեայ երեսներով բարձեր, փափուկ գահաւորակ, գեղեցիկ, մետաքսէ ժապաւեններով մութաքաներ, փափուկ բազկաթոռներ և այլն: Աւելի հետաքրքիր էր տեսնել կամօդի

ամենավերին արկղիկները: Այնտեղ կը գտնէիք զանազան մեծութեան խոզանակներ, անուշահոտ իւղեր, Fixateur des cheveux, որով Մակարեանը օծում և ոլորում էր իր բեղերը, Véritable eau de Cologne, Poudre de riz parfumée, գլիցերինի և ֆրանսիական Velutine սապոններ և այլն: Այնտեղ կար և մի հաստ սետինէ պարան, որոնց ծայրերին ամրացրած էին մետաղէ օղեր: Այդ պարանը ամեն օր ձգձգում էր Մակարեանը և մարմնամարզութեամբ էր պարապում: Բայց ինչ գործ ունենք մտնելու ուրիշի փակած պահարանները և խուզարկելու? Աւելի լաւ է, շարունակենք մեր պատմութիւնը:

Մակարեանը դարձեալ կում-կում խմում էր իր թէյը և անցուղարձ անում: Շաբաթ երեկոյ էր: Նա մտածում էր, թէ ուր գնայ այդ գիշեր և զւարճութիւններից որը ընտրի? Յանկարծ դուռը կամաց թրխթրխկացրին և լսեցաւ մի կանացի ձայն.

—Պարոն, կարելի է?

—Մտէք!

Ներս մտաւ մի մանկահասակ գեղեցիկ ռուս աղջիկ, լւացքի կապոցը ձեռքին:

—Մայրս մի փոքր տկար է, չը կարողացաւ ինքը գալ...

— Ուրեմն դու մեր լւացարարի աղջիկն ես? Ա! ինչ սիրուն աղջիկ է նա ունեցել! ասաց Մակարեանը, մուշտարի աչքով զննելով օրիորդին:

Օրիորդի փափիկ թշերը շառագունւեցան և յանկարծ խաղացին նոցա վերայ երկու սիրուն փոսիկներ:

— Ինչքան է հասնում? Հարցրեց Մակարեանը, աչքը չը հեռացնելով աղջկանից:

— Երկու ռուբլի ու կէս...

— Ասա, խնդրեմ, եթէ երկու ռուբլի ու կէսի տեղ տալու լինիմ հինգ ռուբլի, այն ժամանակ?..

— Այն ժամանակ շատ շնորհակալ կը լինեմ, ասաց աղջիկը:

— Ձէ, իմ ասելը այդ չէ. այն ժամանակ?..

— Ճշմարիտ, չեմ հասկանում, ասաց աղջիկը, աչքերը գցելով յատակի վերայ:

— Օ! ինչ խորամանկն ես! ասաց Մակարեանը, ձեռքը շփելով ալլալլած կոյսի ճերմակ կզակին, — հէ, հէ, հէ, հէ! չես հասկանում, հա?

— Պարոն, ներեցէք, ես շտապում եմ, ասաց աղջիկը մի քանի քալլ յետ քաշւելով:

Մակարեանը դրեց նորա փի մէջ մի հնգանոց և ասաց.

— Շատ ցաւում եմ, որ մայրիկդ հիւանդ է և դու շտապում ես: Եթէ ուրիշ ժամանակ մօտս գաս, ես դարձեալ քեզ փող կը նւիրեմ...

Օրիորդը ոչինչ չը պատասխանեց և շտապով դուրս գնաց: Մակարեանը, թուքը կուլ տալով, հագաւ շորերը, օժւեց, կոկւեց և դուրս գնաց իր կացարանից: Գօլօվինսկի պրօսպեկտը լցւել էր ճեմողներով: Գարնանային գեղեցիկ երեկոներից մէկն էր: Մակարեանը քամւելով ճեմող գեղեցիկ սեռին, վերջապէս հասաւ ժողովարանի մուտքին: Այստեղ նա ողջունեց մի ինչոր սպայի և ներս մտաւ:

II

Օրը կիրակի էր:

Գօլօվինսկի պրօսպեկտի փոշին մի փոքր նօսրացել էր, որովհետեւ դերիաները, յոգնելով փողոցը աւելելուց, քաշոււմ էին դէպի իրանց տները: Իսկ ճեմողները կուշտ-կուշտ ծծելով մաքուր օդը (ոչինչներիցը!), գնում էին տուն ճաշելու: Ժամի ուղիղ 4-ին անցաւ Մակարեանը, կառքի միջին ձգած: Ահա կառքը կանգնեց N. հիւրանոցի առաջ, և Մակարեանը ներս մտաւ: Նորա ճաշելու սովորան ժամն էր: Աստուած օրհնի մեծամեծաց

սովորութիւնը, մինչի ժամի 4-ը չը դառնայ, բերանները պատառ չեն դնիլ! Հիւրանոցի ընդհանուր սեղանատան սեղաններից մէկի շուրջը նստած էին մի քանի երիտասարդ պարոններ, որոնք ճաշը վերջացնելուց յետոյ տաք տաք վիճաբանում էին: Բանն այն էր որ պարոններից մէկը, սիրահարուած լինելով մի օրիորդի վերայ, կամենում էր պսակել. բայց աղջկայ ծնողները չէին համաձայնուում, որովհետեւ փեսացւի մի ոտը կաղ էր: Նստող պարոններից մէկը խորհուրդ էր տալիս թքել և բոլորովին հեռանալ ամուսնանալու մտքից, միևնույն էլ խորհուրդ էր տալիս փախցնել օրիորդին Ամերիկա կամ Հնդկաստան, երրորդը խորհուրդ էր տալիս ոչ ամուսնանալ, ոչ էլ փախցնել օրիորդին, այլ այդ երկուսի միջինը ընտրել... Փեսացուն (պատիւ ունիմ ներկայացնելու՝ պարոն Բադալեան) մնացել էր շլարած: Ոչինչ չէր հասկանում իր ծանօթ պարոնների խորհուրդներից:

— Ահա! պարոն Մակարեան, պարոն Մակարեան!

Մակարեանը ողջունեց բոլորին և նստեց Բադալեանի կողքին: Գործի էութիւնը պատմեցին նորան և ամենքը խնդրեցին նորա կարծիքը: Մակարեանը դուրս չ'եկաւ իր սովորու-

թիւնից. կարծիք են հարցնում, պիտի ասի: Նա լուրջ դէմք ընդունելով՝ կամենում էր խօսել, երբ սպասաւորը Փրակի պոչը շարժելով մատուցեց կերակուրների ցուցակը:

— Սրգանակ Վինձոր հորթի մսից իր կարկանդակով! Գինի Խերես! ասաց Մակարեանը, վայր դնելով սեղանին կերակուրների ցուցակը. — դուք, պարոն Բադալեան, ճիշտ սիրահարուած էք?

— Աստուածանից թագուն չէ, ձեզանից ինչ թագցնեմ?

— Ախար ինչ բան է սիրահարուելը, որ դուք սիրահարուել էք? Սէր ասած բանը աշխարհիս երեսին չը կայ. կայ միայն հրապույր, որ շատ կարճատեւ է լինում: Այդ ձեր կարծեցած սէրը շուտով կը հանգչի, հէնց որ ձեռք բերեցիք ձեր սիրոյ առարկան: Հէնց որ պօէզիան պրօզայի փոխուում, իսկոյն այդ սէրը, կամ աւելի լաւ է ասենք, այդ հրապույրը իսկոյն չքանում է...

Սպասաւորը բերեց կերակուրն ու գինին և սպասում էր երկրորդ կերակրի պատուէրին:

— Մայօնէզ ձկնից կանաչ սօուսով և մի շիշ Կախէթի կարմիր գինի! Ծօպենհագուէրը ասում է, «Ցանկութիւնը ինքն ըստ ինքեան մի տանջանք է, ցանկացածին հասնելը շուտով ծնում

է յագուրդ. ցանկացածի ձեռք բերելը զրկում է նրան իր գեղեցկութիւնից... դարձեալ երեւան է գալիս մի նոր ցանկութիւն, որին հասնելը դարձեալ ծնում է յագուրդ...» Աստուծոյ ողորմութիւնն է, պարոն Բաղալեան, որ ձեր ոտը կաղ է. ապա թէ ոչ, օրիորդի ծնողները կը համաձայնէին և դուք անշուշտ կամուսնանայիք:

— Իմ միակ ցանկութիւնն էլ հէնց այդ է, ասաց Բաղալեանը և սրտից խորը հոգւոյ հանեց:

Մակարեանը, արդէն խմելով մի քանի գդալ արգանակ, ընդունել էր երկրորդ կերակուրը: Մայօնէզի իւրաքանչիւր պատառին ուղեկցում էր գինին: Վիճաբանութիւնը քանի գնում, այնքան տաքանում էր: Հերքումներին և ճառաբանութիւններին վերջ չը կար: Ոմանք պաշտպանում էին Մակարեանի արտայայտած մտքերը, իսկ ոմանք էլ հերքում էին:

— Բոստբիֆ! ասաց Մակարեանը սպասաւորին:

— Երեւակայեցէք, պարոն Բաղալեան, առաջ տարաւ խօսքը Մակարեանը, — որ արդէն ամուսնացել էք ձեր սիրած օրիորդի հետ. անցել է մեղրամիսը և դորա հետ միասին

անցել է և ձեր հրապոյրը: Զեր կինը հիւանդացել է, նա լալիս է, օգնութեան է կանչում, բժիշկ է պահանջում: Իսկ դուք մոռանալով ամեն մի զարճութիւն, մոռանալով գործ և պաշտօն, նստած էք գիշեր-ցերեկ հիւանդի անկողնակալի մօտ, դեղ էք տալիս նորան, վերմակն էք քաշում, ծածկում, բարձն էք ուղղում, շուտ-շուտ ջերմաչափին էք նայում, ճգնում էք խրախուսել հիւանդին, ճրգնում էք ծածկել ձեր սրտի վիշտն ու տրիւրութիւնը և աշխատում էք ուրախ ձևանալ... Այդ րոպէին դուք կ'անիծէք այն սև օրը, որը ձեզ միացրեց, կաշկանդեց ձեզ երկուսիդ ու գցեց ամուսնական ծանր լծի տակ: Իսկ եթէ մի քանի օրդներ էլ ունենաք, որոնք ամեն տուն մտնելիս, տգրուկի պէս կպչեն ձեզանից, «հայրիկ, այս այսպէս եղաւ, հայրիկ, ինձ համար այս ինչ բանը գնիր», ճղճղան, գոռան, կուեն, չանկուտեն, ամբողջ տունը տակն ու վրայ անեն և իրանց հիւանդ մօրը անհանգիստ անեն. իսկ յետոյ իրանք էլ հերթով հիւանդանան՝ մէկը կարմրուկով, միւսը ծաղկով, երրորդը դիֆտիրիտով... Այն ժամանակ էլ, պարոն Բաղալեան, կ'անիծէք ձեր ծնած օրը!..

Բաղալեանը՝ բերանը բաց՝ հետաքրքրութեամբ լսում էր Մակարեանին:

—Շօկօլադի պուգինգ կարմիր գինու սօսուով և վէյնշտէյն! Գիտէք ինչ կայ, պարոն Բադալեան? Պուշկինը ասում է

... Не такъ ли?

Мы смолоду влюбляемся и алчемъ
Утѣхъ любви, но только утолимъ
Сердечный гладъ мгновеннымъ обла-
даньемъ,

Ужъ, охладѣвъ, скучаемъ и томимся!..

Այստեղ Մակարեանը ստիպւած էր առ-
ժամանակ ընդհատելու իր խօսքը, որովհե-
տեւ Վէյնշտէյնի բաժակը մօտեցրել էր բերա-
նին և կամենում էր միջի հեղուկը ներս ու-
ղարկելու: Բարի ճանապարհ!

—Իսկ երբ դուրս գաս տանից, ընտանե-
կան հոգսերից բոլորովին յոգնած, նիհարած,
գնաս ժողովարան կամ թատրոն, տեսնես մի
չքնաղ կոյս, իսկոյն սիրտդ պիտի պղտորւի,
միտքդ պիտի սլանայ և սաւառնի անուրջի
ծովի վերայ. այն ժամանակ լանկարծ կըսթափ-
ւես, լետ կը նայես քո անցեալին, վայ կը
տաս քո գլխին և կ'անիծես քո ներկան:

—Գաղստանի դեղձ! պատւիրեց Մակա-
րեանը և շարունակեց խօսքը:

—Ամուրի մարդը միշտ ուրախ է լինում:
Նա միշտ անհոգ է թուչունի նման: Նա ազատ

է հողմի նման: Նորա ճանապարհը բաց է.
ուր որ կամենայ, այնտեղ էլ կը թռչի: Ամու-
րի մարդը ամեն տեղ էլ պատիւ ու յարգ ու-
նի: Գնում ես հարսանիք, կամ խնջոյք, կամ
պարահանդէս—բոլոր օրիորդները թիթեռի
նման պտոյտ են տալիս գլխովդ: Ամենքն էլ
աշխատում են դուր գալ քեզ: Ամենքն էլ
քեզ պարգևատրում են քաղցր ժպիտներով,
անուշ կօմպլիմենտներով: Իսկ երբ մարդս
պսակւում է, նորա ժամը արդէն դուրս է
գալիս: Գեղեցիկ սեռը մոռանում է նորա գո-
յութեան մասին և էլ չի ասում՝ թէ աչքիդ
վերևը յոնք կայ: Ամուսնանալ! սիրահարւել!
հէ, հէ, հէ, հէ! իսկ երբ կինդ դաւաճանում
է քեզ, սկսում է ուրիշի հետ սիլիպիլի անել,
ուրիշի գիրկը նետւել և իր ամուսնոյ դէմ
դաւադրութիւններ սարքել, այն ժամանակ
ամուսնութիւնն էլ, սիրահարւելն էլ մարդուս
քթածակերից դուրս է գալիս! Ամուսնութիւ-
նը տառապանքի և տանջանքի աղբիւր է!
Ով որ ուզում է դժբաղտանալ, թող պսակւի!

Մակարեանի դէմ էլի եղան ընդդիմախօսու-
թիւններ. բայց նա յամառութեամբ բռնուց-
քով խփում էր սեղանին և անդադար կրկնում.

—Ամուսնութիւնը դժբաղտութիւն է!
Ամուսնութիւնը տանջանքի աղբիւր է!

Յետոյ նա նկատեց Բաղալեանին և միւս պարոններին, որ անհրաժեշտ է վերացնել ամուսնութիւնը, որովհետեւ դորանից մի ժամանակ մարդկութիւնը այնքան կը բազմանայ, որ երկրագնդիս երեսին էլ ասեղ գցելու տեղ չի լինիլ և մարդիկ կսկսեն իրար միս կրծել:

— Ամուսնութիւնը դժբաղտութիւն է! Կրկնեց Մակարեանը, բռունցքով խփելով սեղանին:

Բաղալեանը, որ զմալած լսում էր Մակարեանի փիլիսոփայութիւնը, յանկարծ յիշեց իր սիրուհուն կապոյտ աչերը:

— Այ, պարոն Մակարեան! բացականչեց նա, — դուք սխալւում էք! Դուք այդպէս չէիք դատիլ, եթէ ինքներդ էլ սիրահարուած լինէիք:

— Ես միշտ պաշտպան եմ եղել ամուրի կեանքին, ասաց Մակարեանը, սեղանը թրըխկացնելով, — և մինչև մահս էլ պիտի գնամ նոյն շաւղով! Թէպէտ ես սիրահարութիւն և սէր ասած բանը չեմ ընդունում, բայց հաւատացեք, որ եթէ, ինչպէս դուք անւանում էք, սիրահարուած էլ լինեմ, ես դարձեալ իմ ըսկզբունքից մի մազ անգամ չեմ շեղուիլ!

Խմելիքներից Մակարեանի քթի կարմրութիւնը հետզհետէ աւելանում էր: Արդէն երեկոյ էր: Պարոնները ցրւեցին: Իսկ Մակա-

րեանը, վայելելով սուրճը, վճարեց ճաշի փողը և ինքն էլ դուրս գնաց:

III

Անցան հինգ բոլորիկ տարիներ:

Մակարեանի մէջքի կորուսիւնը հետզհետէ աւելանում էր, երեսի խորշոմները աւելի խորանում, ճերմակ մազերը շատանում, աչքի լոյսը պակասում, հետզհետէ կծկւում էր նորա մարմինը և այլանդակւում: Այժմ նա կարգալիս լըրագիւրը հեռու է բռնում իր ակնոցներից: Շարժումները թոյլ են, ձայնը աւելի նւազ, քան սորանից հինգ տարի առաջ: Անգործութիւնը և զբօսանքը խորը դրօշմ էին թողել նորա ամբողջ էութեան վերայ: Սակայն նա աշխատում էր աշխոյժ և կայտառ ձևանալ, թէպէտ անգութ ընկճատի գոյնը երբեմն խանգարում էր նորան պարելու: Արևս վկայ, ընթերցող, Մակարեանը դեռ երիտասարդ է. եթէ չէք հաւատում ասածիս, իրան հարցրէք! Մինչև անգամ անցեալ օրը նա մի կարճ իւրեկա հագած գեղեցկուհու հետ միասին կառքից ցած իջաւ և մտաւ Պետերբուրգեան համարները: Մինչև անգամ ամսոյս 5-ին պարահանդիսում նա ծանօթացաւ օրիորդ Աննայի հետ ու կաքաւեց: Ներողութիւն, ուզում էի

1001
1708

ասել «ազուաւեց», որովհետեւ Մակարեանը պարեկիս գնդակահար ազուաւի նման այսուայն կողմ էր ընկնում. մինչև անգամ նորա պարելու ժամանակ օրիորդ Աննան ժպտաց: Բայց այդ ժպիտը, օ այդ ժպիտը մի կուսական նուէր էր Մակարեանի համար! Թէպէտ Մակարեանը այնքան էլ ուշադուծիւն չէր դարձնում օրիորդների վերայ, բայց և այնպէս Աննայի ժպիտը հրեշտակային էր: Ե՛հ, ինչ անենք, որ հրեշտակային էր! Հրեշտակային ժպիտով փոր չի կշտանալ! Մակարեանի կարծիքով, այն մարդը, որ հակառակ է ամուսնութեան, նա չը պիտի օրիորդների յետևից թրև գայ և զուր ժամավաճառ լինի: Բոլոր կոյսերի սեթևեթութեան միակ նպատակն է ամուսնութիւն: Օրիորդները վտանգաւոր էակներ են, նոքա միշտ յետին մտքերով են սեթևեթում ամուսնի տղաների հետ, որ մի կերպով իրանք իրանց նազդեն: Իսկ սիրուն տիկիները? Օ, նորանց հոգուն մատաղ լինի Մակարեանը! Սակայն Մակարեանը ամենից շատ սիրում էր երիտասարդ այրի կանանց: Նա երկրապագու էր այդ սգաւորների սև շղարշին, որը պահպանում էր իր տակ պայծառ արևին կարօտ ծաղիկը: Բայց և այնպէս Աննայի ժպիտը հրեշտակային էր: Եւ ինչքան

չքնաղ էր նա պարահանդիսում! Մինչև անգամ Պաւլովսկ ամարանոցում էլ չի տեսել Մակարեանը նորա նման մի գեղեցկուհի: Վեննայի հուշակած գեղեցկուհիներն անգամ կը խոնարհեն օրիորդ Աննայի աստածային պատկերի առաջ: Ախ! Աննայի կապուտակ գոհար-աչերը, նորա վարդագոյն թշերը, թաւշեայ գիսակները, ճերմակ սլարանոցը, նազելի հասակը, հարուստ կուրծքը, աստածային ոտիկները, անուշ ձայնը, կուսական եռանդը... անշուշտ քարին էլ կեանք կը պարգևեն! Երանի, երանի նորան, ով կը տիրանայ Աննայի արտին! Եւ միթէ Մակարեանի վաղեմի բարեկամ Դովլաթեանը այդպիսի չքնաղ դուստր է ունեցել? Մակարեանը յիշում էր Դովլաթեանի հարսանիքը: Հարսանիքին Դովլաթեանը ասաց նորան.

— Սորանից յետոյ պսակւելու հերթը ձերն է.

— Աստուած ոչ տնի! պատասխանեց Մակարեանը ժպտալով: Ահա այն օրւանից քսան տարի էր անցել: Դովլաթեանը իր պսակւելուց յետոյ թողել էր Թիֆլիզ քաղաքը և գընացել Բաքու, ուր պարապում էր վաճառականութեամբ: Օրիորդ Աննան Բաքուում էր ծնւել և աւարտել այնտեղի իգական գիմնա-

զիան: Դովլաթեանը այժմ եկել էր Թիֆլիզ իր ընտանիքով և այստեղ Երևանեան հրապարակի վերայ մանուֆակտուրի խանութ էր բացել: Մակարեանը «Тифлисскій Листокъ»-ում կարգացել էր Դովլաթեանի խանութ բացանելու յայտարարութիւնը մի ամիս առաջ, բայց չէր իմացել, որ իր ծանօթ Դովլաթեանն է: Աննան պարահանդիսում երբ բացատրեց Մակարեանին իր ով լինելը, նա բացականչեց.

— Ա! ճանաչում եմ, ճանաչում եմ! Զեր հայրը իմ վաղեմի բարեկամն է! Ես չը գիտէի, որ նա եկել է Թիֆլիզ, ապա թէ ոչ կը գայի ձեր տուն վիզիտ!

Մակարեանը լիշուով էր Դովլաթեանի հարսանիքը, իր բոլոր անցեալը, Աննայի հրեշտակային ժպիտը և բացականչում.

— Եհ, դարձակ բաներ են! Դովլաթեանն էլ, Մարկոսեանն էլ, Կիրակոսեանն էլ, բոլորն էլ լիմար են, որ ամուսնացել են! Ով խելք ունի թող չը պսակւի: Հազար անգամ կրկնել եմ և հիմա էլ եմ կրկնում՝ ամուսնութիւնը տանջանք է, ազաբութիւնը երջանկութիւն! Մահաւանս մահճումն էլ նոյնը պիտի կրկնեմ և շունչս փչեմ!..

Այս մտածմունքները Մակարեանի ու-

ղեղը բոլորովին յոգնեցրին: Արդէն գիշերուայ ժամի 12-ն էր: Մակարեանը յոգնած գլուխը դրեց բարձին և, առանց շորերը հանելու, քնեց: Այդ երեկոյ նա ոչ մի տեղ չէր գնացել: Մի գաղտնի զգացմունք նորան այսօր մոռացնել էր տւել թատրոն, ժողովարան, կոնծաբանութիւն, թղթախաղ, Շօպենհաուէր, այրիի սև շղարշ և այլն:

IV

Սովորականից շատ վաղ զարթնեց Մակարեանը միւս օրը և շատ նեղացաւ սպասաւորի վերայ, որ դեռ ինքնաեռը պատրաստ չէ: Սպասաւորը դուրս եկաւ նորա սենեակից յոնքերը կիտած և փնթփնթալով.

— Զարմանալի բան է! աբլորի նման լուսաբացին վեր է կացել և ճղճղոցը աշխարհք գցել. ախար նա երբ է ինքնաեռ պահանջել այսպէս շուտով, որ նեղանում է? Քաֆթառ! Ծերացել է և խելքը կորցրել!

Մակարեանը շատ թույլ էր զգում իրան: Բեվմատիզմն էլ մի կողմից էր նորան նեղացնում. իսկ ծանր հազը օրօրում էր նորա ամբողջ մարմինը: Նամի բաժակ կօնեակ խրմեց և կրկին պառկեց: Նա գարձեալ լիշեց պարահանդէսը և Աննային:

ձաշից յետոյ երեկոյեան Մակարեանը իրան մի փոքր լաւ էր զգում: Նա դարձեալ ընկղմւել էր դանազան մտածմունքների մէջ, երբ նորա գլխում ծագեց մի գեղեցիկ միտք՝ նորոգել իր բարեկամութիւնը Դովլաթեանի հետ և յաճախ տեսնել օրիորդ Աննային:

Միւս օրը երեկոյեան Դովլաթեանը, նրստած սեղանի կողքին և իր բոլոր ընտանիքը շուրջը ժողոված, թէյ էր խմում, երբ ծառան ներս մտաւ.

— Մակարեան:

— Մակարեան? Այո, յիշում եմ, ասաց Դովլաթեանը, — ներս հրաւիրիր, թող հէնց այստեղ մտնի!

Ծառան գնաց:

— Հայրիկ, գնացէք հիւրասենեակը, ասաց Աննան:

— Վնաս չունի, զաւակս, մենք նորան այստեղ կընդունենք, օտար չէ, իմ վաղեմի բարեկամն է:

Այդ րոպէին ներս մտաւ Մակարեանը, զուգւած ու կոկւած:

— Ա! բացականչեցին միաբերան երկու բարեկամները և սղմեցին միմեանց ձեռք:

Այստեղ եղան սովորական հարց ու բարովներ և զանազան տեսակ բարեկամական

խօսքեր, որոնց կարիք չը կայ մի առ մի դրելու, մանաւանդ, որ նոքա մեր ասելիքին չեն վերաբերում: Դովլաթեանը պատմեց իր քսան տարւայ կենսագրութիւնը, Թիֆլիզ փոխադրւելը, խանութ բաց անելը, որդոց ուսումնարան տալը և այլն:

— Ես, խօսեց Մակարեանը, — անցեալ օրը պարահանդիսում բաղդ ունեցայ կաքաւելու օրիորդի հետ...

— Այո, հայրիկ, պարոն Մակարեանը շատ հիանալի կաքաւում է..

— Հէ, հէ, հէ, հէ! շնորհակալ եմ ձեր այդ գովասանքից, ասաց Մակարեանը, հալեացքով կլանելով օրիորդի չքնադութիւնը:

— Պառաւ-պառաւ պարահանդէս էլ էք յաճախում! Ճշմարիտ, երջանիկ մարդ էք, ասաց Դովլաթեանը բարեկամական ժպտով: «Պառաւ» խօսքը լսելուն պէս, կարծես, Մակարեանի գլխին մի տակառ սառը ջուր թափեցին:

— Ես եմ պառաւ? Ասաց Մակարեանը, մի կերպ զսպելով իր ներքին յուզմունքը և աչքի տակով նայելով ժպտող օրիորդին: Օրիորդը ինքնաեւի կողքին նստած թէյ էր մատակարարում. իսկ մայրը ինչոր մի ձեռագործ էր կարում: Սեղանի միւս ծայրին էլ մի բարձր

աթոռի վերայ նստած էր փոքրիկ Լեոնիկը
և ոտքերը անդադար խաղացնում, չը նայե-
լով, որ մայրը երբեմն աչքերի շարժումով
սաստում էր նորան: Միջնակ որդին, որ դիմ-
նազիայի երկրորդ դասարանի աշակերտ էր,
թեև դրել էր լատիներէն քերականութեան
վերայ և ուշի ուշով գննում Մակարեանի հա-
սած դամբուրի նման կարմիր քիթը: Առաս-
տաղից կախած կանթեղի լոյսը ընկել էր Մա-
կարեանի մերկ կատարին և պղնձէ թասի նը-
ման շողշողացնում:

— Երջանիկ հայր էք, երջանիկ, ասաց
Մակարեանը Դովլաթեանին, — այսպիսի սիրուն
զաւակներ ունեցողը էլ չի ծերանալ...

— Ընդհակառակը, ընդհակառակը! ասաց
Դովլաթեանը, տխուր-տխուր շարժելով գլու-
խը, — երջանիկ կը լինէի, եթէ ես էլ ձեր օրի-
նակին հետեւէի... լիշում էք? էհ, այդ թող-
նենք մնայ, տեղը չէ... մի խօսքով դուք
երջանիկ էք ինձանից:

— Իսկ Կարամզինը ասում է, ասաց օրի-
որդը, — աշխարհիս երեսին չը կայ երջանկու-
թիւն ասած բանը, իսկ եթէ կայ, այն էլ հա-
մեմատական:

— Այո, շատ ճշմարիտ է! պնդեց մայրը,
հիանալով իր դստեր զարգացման վերայ:

Դոցա խօսակցութեան ժամանակ գիմնա-
զիստը ինքն իրան փնթփնթում էր.

— Bonus, mellior, optimus,

Multus, plus, plurimus

Magnus, major, maximus...

Թէից լետոյ ամենքը գնացին հիւրասե-
նեակը, որտեղ օրիորդ Աննան սկսեց դաշնա-
մուր նւագել: Մակարեանի աչքը չէր հեռա-
նում կոյսի թեթեւթուիչ մատներից, որոնք
աւելի ճերմակ էին, քան դաշնամուրի ստե-
ղունքները: Օ, ինչ հրաշալի է Աննան դաշ-
նամուրի առաջ! Մակարեանը հոգեզմայլու-
թեան մէջ էր, երբ Աննան հնչեցրեց վերջին
ակկօրդը և վերկացաւ տեղից:

— Բրավօ, բրավօ, բրավօ! Ծափահարեց
Մակարեանը օրիորդին, — հրաշալի է! աննման
է! Ես դեռ կեանքումս չեմ տեսել մի այդ-
պիսի կատարելութիւն, մի այդպիսի հմուտ-
թիւն!.. Ես ինքս երաժշտութեան սիրահար
եմ և պատրաստ եմ այսպէս նստել ամբողջ
ժամերով և սքանչանալ ձեր խաղով... եթէ
թոյլ կը տաք... եթէ իմ ներկայութիւնը ձեզ
տհաճութիւն չի պատճառել, կը յաճախէի
երբեմն յատկապէս ձեզ լսելու համար...

— Օ, ոչ թէ երբեմն, ասաց Դովլաթեա-
նը, — միշտ կարող էք յաճախել...

Եթէ Մակարեանը լինէր մի նորածանօթ երիտասարդ, գուցէ Դովլաթեանը ուրիշ պատասխան տար նորան: Բայց նա վստահ էր իր վաղեմի բարեկամ և այժմ ծերացած Մակարեանի անկեղծութեան վերայ:

— Համեցէք, ձեր տունն է, աւելացրեց տանտիրինը, — դուք տանը մենակ տխուր կը լինէք, իսկ այստեղ Անիւտաս, որը նմանապէս և ձեր որդու տեղն է, կարող է ձեզ զւարճացնել իր խաղով... ամբողջ Բաբուսն է նա միակ՝ երաժշտուհին էր իր ընկերուհիներէ մէջ, մինչև անգամ գիմնադիպի նա չալլնից ան հիացել էր Անիւտայի խաղով...

Օրիորդ Աննան լուռ էր: Նա ոչինչ չէր խօսում:

Վերջապէս Մակարեանը գոհ սրտով սըղմեց բոլորի ձեռքը և մնաք բարով ասաց: Դուրս գալիս նա չը մոռացաւ Աննային ասելու:

— Օրիորդ, դուք ինձ շատ պարտաւորացրիք!

V

Անցել էր մի քանի օր:

Աննայի պատկերը չէր հեռանում Մակարեանի մտքից: «Երջանիկ» հօր զաւակը տակն-

ու վրայ էր արել նորա սիրտը և խանգարել նորա հոգու անդորրութիւնը: Ախ! եթէ հնար լինէր... ինչ? խնդրել օրիորդի ձեռքը? Բայց չէ որ ամուսնութիւնը տանջանք է? Այսքան տարիներ Մակարեանը յամառութեամբ պատշպանի իր քարոզած մտքերը, իսկ այժմ իր թքածը լիզի? Ոչ, ոչ! Այդ անկարելի բան է: Մակարեանը քամելիւն չէ, նա հաստատ և տոկուն մարդ է: Ինչ բան է սէրը, որ նորա առաջ Մակարեանը գլուխը խոնարհի, ինչպէս թեթև եղէգնիկը քամու առաջ? Սէր ասած բանը չը կայ. այլ նորա տեղ միայն կայ հրապոյր, որը կարճատև է լինում: Ամուսնութիւնը պիտի վերացնել, որ երկրազնդիս վերայ տեղ լինի ապրելու: Ինչպէս կարելի է, որ ամուրի մարդը զրկւի իր պատիւ ու յարգից և մտնի ամուսնական կեանքի դառնութեան ծովը? Սիրուն-սիրուն տիկիններին, ջահէլ այրիներին մոռանալ և կեանքը կապել միայն մէկի հետ? Այդ մի մեծ յիմարութիւն կը լինի: Օրիորդ Աննան մի անուշահոտ ծաղիկ է, որը պէտք է մի անգամ հոտ քաշել և դէն շարտել: Սակայն այդ ծաղիկը շրջապատւած է անմատչելի փշերով ու տատակներով, որոնց Մակարեանը իր հայեացքներով և դատողութիւններով չի լանդգնիլ մօտենալ: Ուրիշ են

Նևսկիյ և Լիտէյնի պրօսպեկտների գիշերա-
յին ծաղիկները: Ուրիշ են Թիֆլիզի խուլ ան-
կիւնների և Բաքուի տաճարների ծաղիկները:
Նոքա բոլորն էլ առանց փշերի, առանց տա-
տասկների են և մատչելի ամենքի համար:
Բայց այդ ծաղիկները թառամած են, խորշո-
մած և զրկւած իրանց կուսական բուրմուն-
քից! Իսկ օրիորդ Աննան? Օ, նրա բանը ու-
րիշ է! Նա մի մարմնացած երջանկութիւն է.
նա մի երկնային հրեշտակ է. նա գեղեցկու-
թեան տիպար է, որին մինչև անգամ կը նա-
խանձէր ինքը Վեներան! Նա այն իդէալա-
կան գեղեցկուհին է, որին երգում, փառաբա-
նում են Պառնասի գաւակները! Շքեղ բնու-
թիւնն անգամ կը նսեմանայ նորա գեղեցկու-
թեան առաջ! Նա քմահաճութեամբ դէն կը
շարտի Ռաֆայէլեան վրձինը և կը ծիծաղի
Մադօննայի վերայ! Նա իր բարձրութիւնից
վեհութեամբ կը շրջահայի բոլոր գեղեցիկ սե-
ռի վերայ և արհամարանքով կը շրջի երեսը
դէպի Օլիմպոսի կատարը! Բարին և չարը կը
խոնարհւեն նորա առաջ! Սկզբունք և գաղա-
փար կը խորտակւեն նորա ոտների տակ և
փոշի կը դառնան!

— Յիմար էի ես! գոչեց Մակարեանը,
— որ պաշտպանում էի ամուրի կեանքը!..

Միակ երջանկութիւնը ամուսնութիւնն է!..

Կա տաքացած անցուդարձ էր անում սե-
նեակում, երբ յանկարծ կանգնեց պատի հա-
յելու առաջ՝ և սկսեց իրան զննել ոտից մին-
չև գլուխ:

— Այլանդակ ծերունի! գոչեց նա յուսա-
հատւած, փախչելով հայելու առաջից, — նա
քեզ չի հաւանիլ! Ժամդ արդէն դուրս է եկել!

Մակարեանը ընկաւ բազկաթուռի վերայ
և սկսեց երեխայի նման հեկեկալ: Շնորհա-
ւոր լինի, Մակարեանը տրդէն ծերացել է! Թէ
չէք հաւատում իրան հարցրէք:

— Բայց-եթէ նորա հետ ամուսնանամ,
նա ինձ կը ջահելացնի! — մտածում էր Մա-
կարեանը, — նա իմ կեանքը կ'երկարացնի. նո-
րա մի համբոյրը կենսական էլեքսիր է, իսկ
հայեացքը — բուժիչ պալատան: Բայց ինչպէս
խոնարհեցնեմ ալեգարդ գլուխս այն աստա-
ծային մանկան առաջ!.. Նա մի հասակակից
ընկերոջ գաւակն է! նա իմ որդու տեղն է!..

Բայց և այնպէս Մակարեանը ուզում էր
հէնց այն ըոպէին թռչուն դառնալ և թռչել
իսկոյն իր կուռքի մօտ:

Միւս օրը առաւօտեան նա հագաւ իր
վիզիտի զգեստը, պաճուճւեց, զուգւեց և
դուրս եկաւ տնից:

— Գնամ Բերլեմօնի մօտ, ասաց ինքն իրան Մակարեանը — նա ասում էր, որ շուտով մի երևելի վարսալարդար պիտի բերել տար Փարիզից:

Բերլեմօնը ցոյց տւեց Մակարեանին մի երիտասարդ ֆրանսիացու, որը քաղաքավարութեամբ գլուխ տւեց ծերունուն և հրաւիրեց նորան նստելու հայելու առաջ:

— Ի՛է, պարոն վարպետ, թափեցէք ձեր բոլոր ճարտարութիւնը և մատների շնորհքը, այնպէս արէք, որ ես ջահէլանամ:

— Կաշխատեմ, պատասխանեց ֆրանսիացին և սկսեց մկրատը շրխկշրխկացնել Մակարեանի մերկ կատարի եզրների վերայ:

— Ասացէք խնդրեմ, մի այնպիսի միջոց չը կայ, որով կարելի լինի արգելել ճերմակ մազերի աճելուն? հարցրեց Մակարեանը:

— Ոչ. միայն կարելի է ներկել, երբոր բոլորը կը ճերմակեն.

— Իսկ այս յոնքերիս և բեղերիս ճերմակ մազերը?

— Ես հիմայ զգուշութեամբ կը պոկոտեմ փոքրիկ ունեւիքով, մանաւանդ որ նոցա թիւը շատ չէ:

Վարսալարդարը ուղղեց Մակարեանի գըլ-

խի մազերը և սկսեց պոկոտել նորա բեղերի և յոնքերի ճերմակ մազերը:

— Ու՛ֆ! ի սէր Աստուծոյ, կամաց! բացականչում էր Մակարեանը, ճպճպացնելով արտասուալից աչքերը:

Յետոյ երեսը ածելու ժամանակ Մակարեանը հարցրեց.

— Խնդրեմ ասացէք, մի այնպիսի միջոց չը կայ, որով կարելի լինի աճեցնել անմազ տեղերը? Կարգացի լրագրում, որ Անգլիացի բժիշկ Ստոկերը թթւածնով լցրել է ռետինէ գլխարկը և ծածկել նորանով մի ութամեայ ճաղատ աղջկայ գլուխը, և ծամերը սկսել են աճել:

Վարսալարդարը ոչինչ չը պատասխանեց, այլ միայն մի զարմացական նշան արաւ:

— Իսկ այնպիսի միջոց չը կայ, որով կարելի լինի անհետացնել երեսի խորշոմները ու ճակատի կնճիռները? Կարգացի լրագրում, որ այդ նպատակի համար ինչոր մի տեսակ սապոն է գուրս եկել. ձեր Փարիզում այդ սապոնից չի գտնւիլ արդեօք?

— Խորշոմները միայն կարելի է մի փոքր աննկատելի դարձնել պուդրով, — պատասխանեց վարպետը:

Այդ Մակարեանը արդէն գիտէր:

Վարսալարդարը օդը կ'օլօնով լւաց Մակարեանի երեսն ու ճակատը, պուղրաքսեց, մազերը օծեց անուշ իւղով, բեղերը կրտեց, բարակացրեց և աաքացրած ունեւիքով սկսեց ոլորել: Այստեղ մի փոքրիկ կատաստրօֆա պատահեց: Վարպետը, երբ ունեւիքը մօտեցրել էր Մակարեանի բեղերին, մագերի խանձահոտը տւեց նորա քթին և նա փռչտաց: Այդ ընթացքին յանկարծ ունեւիքի ծայրը կպաւ նորա քթին: Մակարեանը տեղից վեր թռաւ և բացականչեց.

— Այդպէս էք սովորել վարսալարդարութիւնը Փարիզում? Փրանսիացին մի քանի զոյգ «պարդօն» ասաց. սակայն ինչ կ'օգնէին «պարդօն»-ները խեղճ Մակարեանի քթին? Նա (այսինքն Մակարեանը և ոչ թէ քիթը) փնթփնթալով դուրս գնաց Բերլեմօնի խանութից, գնաց տուն, մի փոքրիկ սպեղանի կպցրեց քթին և կրկին դուրս գնաց: Թէպէտ սպեղանին քթին անյարմար էր դուրս գալը, բայց ինչ արած? Հարկը պահանջում էր:

VI

Տառներկու ժամն էր առաւօտուայ:

Դովլաթեանը գնացել էր իր խանութը հրակելու գործակատարների վերայ: Իսկ նորա կինը

խոհանոցում զանազան կարգադրութիւններ էր անում և շտապեցնում էր սուրճը, որովհետեւ շուտով ամուսինը նախաճաշելու պիտի գար: Գիմնագիտը գիմնագիտայում էր, իսկ փոքրիկ Լեոնիկը մանկական պարտիզում: Օրիորդ Աննան էլ նստած դահլիճում՝ կարգում էր Զօլայի «Դօկտոր Պասկալը»: Օրիորդի չքնաղ դէմքի վերայ երբեմն տհաճութեան նշաններ էին երևում: Նա մտքում ծիծաղում էր Պասկալի վերայ և խստօրէն յանդիմանում Կլօտիլդեային, որ իր կուսական ծաղիկ հասակը մատնել է քայքայւած ծերունուն: Աննան կարգում էր անոթները և յիշում իր ծաղկափրթիթ փեսացւին, յիշում նորա երիտասարդական առոյգ դէմքը, կրակոտ աչքերը, խրոխտ ձայնը, նորածիլ բեղերը ճեմարանական նշանը, բարձր հասակը... ինչ համեմատութիւն նորա և Պասկալի մէջ!

Այդ ընթացքին դռան զանգը հնչեցրին: Օրիորդը վեր թռաւ բազկաթոռից և թողեց գիրքը:

— Անշուշտ հէւր կը լինի, թէ չէ հայրիկը միշտ իր բալանիքով է բաց անում դուռը, — մտածեց Աննան:

Նա լուսամտից դէպի փողոց նայեց և տեսաւ Մակարեանին, որ դռան մօտ կանգնած՝ ուղղում էր փողպատը:

—Համեցէք! ձայն տւեց օրիորդը՝ նախա-
սենեակից քաշելով դռան փականքի թելը:

Մակարեանի սիրտը սկսեց թնդալ: Նա
ներքեւից ողջունեց և հազելով սկսեց բարձ-
րանալ սանդուխտներով:

—Պատիւ ունիմ,—ասաց Մակարեանը,
սղմելով օրիորդի ձեռքը և մի քանի անգամ
խոնարհեցնելով մերկ կատարը կոյսի առաջ:—
Իսկ պարոն Դովլաթեանը? տիկինը?

—Խնդրեմ ներս մտէք,—ասաց Աննան,
—հալըս շուտով կը գայ, իսկ մայրիկին շու-
տով կը կանչեմ...

—Ոչինչ, ոչինչ, մի՛ք անհանգստացնիլ
տիկնոջ, թող նա իր գործով զբաղւի... մա-
նաւանդ ես ուզում էի ձեզ հետ առանձին...
ըր՛, այսպէս ասած... դաշնամուրը շարունա-
կում էք?... Այդ ինչ գիրք էք կարդում? ու-
ման է?..

Աննան ոչինչ չը հասկանալով Մակա-
րեանի խօսքերից, միայն ժպտաց և աթոռ
մատուցեց: Մակարեանը նստեց օրիորդի հան-
դէպ: Տիրեց խորին լռութիւն, ինչպէս ասում
են բանաստեղծները: Մակարեանը սաստիկ
յուզւած էր: Նա ուզում էր խօսել, ասել,
սկսել... բայց կարծես լեզւի վերայ փականք
էր դրւած: Նա չէր իմանում ինչով ընդհա-

տել լռութիւնը: Եթէ խօսք բանար եղանա-
կի մասին, այդ էլ շատ է պրօզայական: Նա
մտածում էր: Իսկ Աննան խաղում էր Զօլայի
ստեղծագործութեան թերթերի հետ և եր-
բեմն աչքի տակով նայում Մակարեանին:
Օրիորդական դիտող աչքերից աննշմարելի չը
մնացին ծերունու բեղերի և յոնքերի անցեալ
օրւայ ճերմակ մազերի չքանալը, նորա պուդ-
րայած երեսը, անուշ իւղով օծւած մազերը:
Իսկ այն սպեղանին? Ով գիտէ, երևի կաքա-
ւելիս յանկարծ վայր է ընկել և քիթը աթո-
ռին դիպցրել:

—Ազնւափայլ օրիորդ,—վերջապէս խօ-
սեց Մակարեանը շփսթւած,—ես կամենում
էի ձեզ ասել... ըր՛, այսպէս ասած՝ մի զոյգ
տաք խօսք... եթէ որ միայն դուք առհասա-
րակ... համարեա թէ... սակայն... այնուամե-
նայնիւ... մանաւանդ, այսինքն՝ նամանաւանդ
որ...

—Ինչպէս? ասաց Աննան, կասկածանքով
նայելով ծերունուն:

—Ես... ըր՛... հիացած եմ ձեր խաղով,
—ասաց Մակարեանը, խօսքը սարուքար դը-
ցելով:

—Երջանիկ եմ զգում ինձ այդ ձեր գո-
վեստի համար,—ասաց օրիորդը ժպտալով:

— Ես մինչև անգամ ուզում էի մի ծաղկեփունջ մատուցանել ձեզ, — ասաց Մակարեանը մի փոքր սիրտ առած, — սակայն բարւօք մամարեցի նախ ձերդ սքանչելիութեան թոյլտուութիւնը խնդրել:

— Շատ շնորհակալ կը լինէի, ես առհասարակ ծաղիկներ շատ եմ սիրում:

— Ը՛ր... խնդրեմ ասացէ՛ք՝ որ գոյնի ծաղիկն էք աւելի սիրում?

— Ձանազան գոյնի, բայց կարմիրը աւելի շատ եմ սիրում, — պատասխանեց օրիորդը, ուղիղ նայելով Մակարեանի կարմիր քրթին:

Ձը գիտեմ թէ ինչու, օրիորդի ծիծաղը գալիս էր. բայց նա մի կերպով զսպում էր իրան:

— Այո, այո, կարմիր ծաղիկը սիրոյ է մըլէմ ա է, — ասաց Մակարեանը, — և եթէ մատուցանէի, անշուշտ չէիք մերժիլ, այնպէս չէ?

— Ոչ, — ասաց Աննան՝ կասկածանքով նայելով նորան:

Եթէ օրիորդը իմանար, որ Մակարեանը այդպիսի մի հարց պիտի առաջարկէր, անշուշտ կը պատասխանէր, որ դեղին ծաղիկը աւելի է սիրում: Կրկին տիրեց լռութիւն, որ աւելի կարճատև էր, քան առաջինը:

— Օրիորդ, ասացէ՛ք մի որևիցէ քաղցր բան! — ասաց Մակարեանը՝ ագահութեամբ նայելով կոյսի շառագունւած թշերին:

— Քաղցր բան? — Մեղր, պատասխանեց Աննան ժպտալով:

— Հէ, հէ, հէ, հէ! Հիանալի է, շատ հիանալի է! Ը՛ր... այսպէս ասած՝ հիանալի է!.. թոյլ տւէ՛ք՝ համբուրեմ ձեր ձեռքը, — բացականչեց ծերունին, մօտենալով օրիորդին:

— Ես տէրտէր չեմ, որ դուք համբուրէք իմ ձեռքը, — պատասխանեց Աննան յետ քաշւելով:

Մակարեանը կրկին նստեց իր տեղը: Իսկ օրիորդը դարձեալ սկսեց խաղալ քրքի թերթերի հետ: Սիրահարւած ծերունին երկար տատանւելուց յետոյ, վերջապէս վճռեց բացառբաց յայտնել իր սէրը:

— Օրիորդ!.. խօսեց Մակարեանը դողդօջուն ձայնով,

— Տէր Աստուած, խելագարւել է ծերունին? մտածեց Աննան:

— Օրիորդ!.., շարունակեց Մակարեանը, — հոգիս անգորր էր, սիրտս խաղաղ, բացասում էի սէրը, հակառակ էի ամուսնութեան. ջերմ պաշտպան էի ամուրի կեանքին...

— Ինչ հարկաւոր են ինձ այդ խօսքերը? —
ասաց Աննան այլայլւած:

— Բայց լետոյ բոլոր սկզբունքներս, բո-
լոր հայեացքներս ջախջախւեցան, խորտակ-
ւեցան մի աստուածային էակի առաջ, որը
խանգարեց իմ անդորրութիւնը, անշէջ կրա-
կով լցրեց սրտիս խորքորը: Այդ էակը, կար-
ծես, երկնքիցն է ուղարկւած, որ ես նորա
առաջ ծուներ դնեմ, համբուրեմ նորա զգեստի
քղանքը և սէր հայցեմ նորանից, սէր...
Այդ էակի մէջն է իմ բոլոր երջանկութիւնը,
նորա մէջն է իմ մխիթարութիւնը և սփո-
փանքը. այդ էակի մէջ է ամփոփած իմ իդէա-
լը, իմ բոլոր կեանքը... Այդ էակն է միայն
իմ աստուածը, որին պաշտում եմ անզուսպ
սիրով, որին հաւատում եմ անսահման հա-
ւատով...

— Նախանձելի էակ! ասաց օրիորդը հեզ-
նական ժպիտով:

— Եւ այդ էակը զո՞ւք էք!.. բացականչեց
Մակարեանը և չոքեց կոյսի առաջ. — զո՞ւք էք
այն էակը, զո՞ւք էք իմ կուռքը, իմ աստու-
ածը, իմ կեանքը, իմ ամեն բանը... զթացէք
ինձ վրայ, աղաչում եմ! ձեր միակ խօսքիցն
է կախւած թէ իմ կեանքը և թէ իմ մահը!..
ահա ծունկ չոքած, աղերսում եմ ձեր սէրը!

օրիորդ, իմ հրեշտակ!.. Ահա այսպէս կ'ար-
տասւեմ, այսպէս կը սողամ ձեր ոտների տակ,
կը համբուրեմ ձեր կօշիկները, կը լպստեմ
ձեր ոտների փոշին!..

Մակարեանը յանկարծ սալթաքեց և կը-
զակը դիպցրեց աթոռին:

— Ախ! օրիւ-ըա-ա!..

Բերանը մնաց չռած: Մակարեանի ար-
հեստական ատամների շարքը դուրս պրծաւ
լնդերքներից և ընկաւ լեզւի վերայ:

— Հա! հա! հա! հա! հա!!!.. բարձրաձայն
ծիծաղով Աննան վազեց դէպի դռների կողմը,
ուր ընդհարւեց իր ծնողների հետ: Դովա-
թեանը և իր կինը, որոնք վաղուց նայում
էին, մնացել էին ապշած:



23914
23915
23916
23917

2013

